ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ–ում հայտարարվում է մրցույթ ֆիզկուլտուրայի, հայոց լեզվի, ռուսաց լեզվի և ռուսերեն լեզվով ուսուցմամբ քիմիայի (5դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Վերոնշյալ առարկայի ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***հունվարի 10-ից մինչև հունվարի 25-ը ներառյալ,*** ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա <<Գյումրու N 23 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում ***հունվարի 31-ին ժամը 13^{00}-ին:***

Դպրոցի հասցեն է՝ ք.Գյումրի, Մուշ 2թաղ. 9փ. 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 55 63 21 հեռախոսահամարով: